ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՀԱՅ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Պողոսյան Գևորգ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտական ղեկավար

Բնակչության արտահոսքը Հայաստանից տարիների ընթացքում չի նվազել: Այսպես, 1990-2000 թվականներին մեկնողների թիվը տարեկան կտրվածքով կազմում էր 30-35 հազար[1], իսկ վերջին տարիներին այն նույնիսկ աճի միտումներ ունի: Բնակչության նվազման գործընթացում շեշտակի դեր է կատարում նաև ծնելիության ցուցանիշի կտրուկ անկումը: Սովետական շրջանում Հայաստանում տարեկան գրանցվում էր միջինում 73 հազար նորածին. այսօր այդ թիվը կրկնակի նվազել է՝ հասնելով 35-36 հազարի[2]: Ավելին, ծնելիության ցուցանիշը հետզհետե մոտենում է մահվածության ցուցանիշին, ինչն վկայում է բնաթափման (depopulation) երևույթի մասին: Այս խիստ վտանգավոր երևույթին դիմակայելու միջազգային փորձը վկայում է հիմնական երկու մեխանիզմների արկայության մասին: Առաջինը՝ ծնելիության աճի խթանումն է, իսկ երկրորդը՝ բնակչության մեխանիկական ներհոսքի կազմակերպումը: Ծնելիության աճն ապահովելու համար հարկավոր են լուրջ միջոցների ներդնում՝ ներառյալ բազմազավակ ընտանիքներին զգալի նյութական օգնության տրամադրում: Սակայն միջազգային փորձը վկայում է, որ նույնիսկ ֆինասական օժանդակությունը բավարար չի լինում[3]: Հայաստանը առավել ուրբանիզացված երկրներից է, քանի որ մեր բնակչության 70% բնակվում է հանրապետության քաղաքներում: Սոցիոլոգներին հայտնի է, որ քաղաքաբնակ

---

[1] **Погосян Г.А.** Современное армянское общество. Особенности трансформации. Москва, Изд-во АН “ACADEMIA”. 2005. С.145.

[2] Ծնելիության և մահվածության դինամիկան Հայաստանում. https://www.armstat.am/am/?nid=13

[3] **White J. M.,** Advancing family theories. Thousand Oaks. CA.: Sage. 2005.

կանայք հակված չեն շատ երեխաներ ունենալ և ձգտում են ակտիվորեն մասնակցել սոցիալական կյանքին[4]: Հետևաբար՝ հայրենադարձության ներհոսքի խթանումը դառնում է բնակչության աճի ապահովման կարևորագույն գրավականը: Այս առումով մենք ունենք մեծ առավելություն՝ ի դեմս աշխարհասփյուռ հայության: Եվ քանի դեռ ամենամեծ հայ սփյուռքը գտնվում է Ռուսաստանում, ապա այն հանդիսանում է հայրենադարձության մեծագույն պոտենցիալ աղբյուրը:

Հետազոտության նկարագիրն ու արդյունքները

Մեր ուսումնասիրության որպես մեթոդաբանական հիմք են ծառայել սփյուռքի տեսության հիմնավոր աշխատություններ[5], ինչպես նաև բնակչության միգրացիայի տեսությունը: Գիտական վերլուծության ընթացքում օգտագործվել են նաև Հայաստանի և Ռուսաստանի պաշտոնական վիճակագրությունը: 2020 թվականին ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Դեմոգրաֆիական ուսումնասիրությունների ինստիտուտի հետ նախաձեռնել էին հետազոտական ծրագիր՝ «Հայկական սփյուռքի սոցիալ-տնտեսական ներուժը ԵԱՏՄ ինտեգրման գործընթացների համատեքստում» խորագրով[6]: Սոցիոլոգիական հետազոտությունները կատարվել են 2021 թվականի ամռան-աշնան ամիսներին: Հայաստանում սոցիոլոգիական ուսումնասիրությունը անցկացվել է հանրապետության 33 քաղաքներում, 500 հայ ընտանիքների շրջանում: Բացի այդ հատուկ հարցում է անցկացվել 30 հայ փորձագետների հետ, որքեր առնչվել են միգրացիոն խնդիրներին: Ռուսաստանում մեր գործընկերները սոցիոլոգիական հարցումն անցկացրել են Մոսկվայում, Կրասնոդարի և Ստավրոպոլի հայաշատ մարզերում, 1500 հայ միգրանտների շրջանում[7]: Նրանց հետաքրքրում էր հայ սփյուռքի ինտեգրումը Ռուսաստանի սոցիալ-տն-

---

[4] **Bengtson V.L.** Beyond the Nuclear Family: The Increasing Importance of Multigenerational Bonds // Journal of Marriage and Family. 2001. Vol. 63. No.1. P. 1-16.

[5] **Brubaker, R. G.** The “Diaspora”. Ethnic and Racial Studies. 2005. № 28 (1). PP. 1-19.

[6] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն միջազգային մրցութային ծրագրով (ծածկագիր՝ 20RF-043):

[7] **Анатолий Топилин, Геворк Погосян, Галина Осадчая, Никита Рязанцев.** Социально-экономический потенциал армянской диаспоры в контексте интеграции в ЕАЭС// Центральная Азия и Кавказ. Том 24. Выпуск 3. 2021. С.117-128.

տեսական կայնքում և ազդեցությունը տնտեսության վրա[8], իսկ մեզ հետաքրքրում էր Ռուսաստանում հայ սփյուռքի հայրենադարձության ներուժի հնարավոր ծավալը:

Ինչպես ցույց տվեց մեր ուսումնասիրությունը, ուսման կամ աշխատանքի որոնումով Ռուսաստան տեղափոխված ընտանիքների անդամների 38%-ը կազմում են երիտասարդներ: Մեկնածների բոլոր խմբերում գերիշխում են տղամարդիկ, ինչը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ Հայաստանում գենդերային առումով գերակայում է տղամարդկանց միգրացիան: Մեր հարցվածների գրեթե կեսի (45,8%) կարծիքով միգրացիայի հիմնական պատճառ է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը հայրենիքում: Այլ կերպ ասած, Հայաստանից միգրացիան գլխավորապես աշխատանքային միգրացիա է:

Միգրանտների զգալի մասը բավականին շուտ է մեկնել Հայաստանից: Այսպես, օրինակ՝ ընտանիքի անդամների ու բարեկամների մեծ մասը (41,6%) մեկնել է 10-15 տարի առաջ; նրանց քարորդ մասը (25,8%) մեկնել է 5 տարի առաջ; համեմատ փոքր մասը (13,0%) արտագաղթել է ընդամենը մի քանի տարի առաջ: Այսպիսով միգրանտների մեծ մասը կազմում են մարդիկ, ովքեր արդեն վաղուց բնակվում և աշխատում են Ռուսաստանում: Աշխարհագրական առումով հայ միգրանտների զգալի մասը տեղափոխվել է Մոսկվա (41,4%), մնացածը՝ Կրասնոդարի մարզ (13,8%), Պետերբուրգ (11,6%), Ստավրոպոլի մարզ (4,4%) և այլ քաղաքներ (28,6%): Հայ միգրանտները բավականին արագ աշխատանքի են անցնում, ինչի մասին է վկայում նաև ԵԱՏՄ կազմում տնտեսական ինտեգրման գործընթացների վերլուծությունը[9]: Մեր ուսումնասիրության տվյալներով հայ միգրանտների ճնշող մեծամասնությունը (88,2%) աշխատում է Ռուսաստանի տնտեսության տարբեր ոլորտներում: Այսպես, նրանց 24,8%-ն աշխատում է շինարարության ոլորտում, 20%-ն առևտրի ոլորտում, 11,2%-ն արդյունաբերությունում, 7,6%-ը՝ տրանսպորտում, իսկ 11,8%-ը սովորում են կամ զբաղված են տնային տնտեսություններում:

---

[8] **Осадчая Г.И., Погосян Г.А., Лескова И.В., Юдина Т.Н., Киреев Е.Ю.** Феномен диаспоры: анализ современного состояния через призму исследований в данной области // Мир науки. 2021. Т.12. № 2. С.1-10.

[9]Տե՛ս **Թավադյան Ա., Մանասերյան Թ.,** “Հայ-ռուսական տնտեսական համագործակցության զարգացման կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարները "//«Հայ-ռուսական ռազմավարական դաշինքի արդի վիճակն ու տեսանելի հեռանկարները». Երևան, 2021թ. էջ 39-45:

Միգրանտների 13%-ն արդեն ստացել են Ռուսաստանի քաղաքացիություն, ևս 45%-ը մտադրություն ունեն ստանալու: Այս միգրանտները միանշանակ ձգտում են ինտեգրվել Ռուսաստանի հասարակության սոցիալ-տնտեսական կյանքին[10]:

Ուշադրության արժանի է այն հանգամանքն, որ Հայաստանում մնացած ընտանիքների մեծ մասը (82,2%) մշտապես հաղորդակցվում է Ռուսաստան մեկնած բարեկամների հետ հեռախոսով, կամ ինտերնետ կապի միջոցով: Ընտանիքների վկայությամբ մեկնած բարեկամների կեսը (52,6%) կանոնավոր ֆինանսական օգնություն է տրամադրում; 14,6% ամեն ամիս որոշակի գումար է ուղարկում; 24,2% ժամանակ առ ժամանակ է ուղարկում, իսկ 13,8% տարբեր տեսակի օժանդակություն են տրամադրում իրենց ընտանիքներին: Մեզ հետաքրքրող հիմնական հարցին այն մասին, թե արդյո՞ք երկրից մեկնած ընտանիքի անդամներն ու բարեկամները մտադրություն ունեն հայրենիք վերադառնալ, ստացվել են հետևայլ պատասխանները. 10% կարծում է, որ մոտ ժամանակ նրանք կվերադառնան տուն; 13,8% հույս հայտնեց, որ նրանք կվերադառնան մոտակա ապագայում, սակայն մեծամասնության (63,2%) կարծիքով այդպիսի մտադրություններ նրանք չունեն և հավանաբար երբեք հայրենիք չեն վերադառնա:

Հատկանշական է, որ Հայաստանում հարցված 30 փորձագետների կարծիքները հիմնականում համընկան ընտանիքների կարծիքների հետ: Այսպես, փորձագետների 36,6% հնարավոր է համարում հայ միգրանտների վերադարձն ապագայում; նրանց 26,6% համոզված է, որ միգրանտներն առայժմ այդպիսի մտադրություն չունեն, իսկ 36,6% համարում է, որ նրանք հավանաբար երբեք չեն վերադառնա: Այս վերջին երկու պատասխանների գումարը կազմում է 63,2%: Ճիշտ այնքան, որքան կազմել էր հարցված ընտանիքների վերը նշված պատասխանները: Փորձագետների և միգրանտների ընտանիքների կարծիքների նման համընկնումը մեր կարծիքով վկայում է ստացված արդյունքների բարձր արժանահավատության մասին:

Ռուսաստանի մեր գործընկերների կողմից 1500 հայ միգրանտների շրջանում կատարված սոցիոլոգիական հետազոտությունը ցույց

[10] **Тавадян А., Тавадян Аг.** Сценарии развития и возможные эффекты интеграции // журнал «Мир перемен». № 3.2021. Москва. С.76-89.

է տվել մոտավորապես նման արդյունքներ: Այսպես, հարցվածների 26,6% պատասխանել է, որ հնարավոր է ապագայում նրանք վերադառնան հայրենիք; ևս 39,2% պատասխանել է, որ նման մտադրություններ նրանք առայժմ չունեն, և 19,6% հայտնել է, որ հավանաբար երբեք չեն վերադառնա: Վերջին երկու պատասխանների գումարը կազմում է 58,8%: Ինչպես տեսնում ենք, պատասխանների այս տոկոսը շատ մոտ է փորձագետների ու ընտանիքներում ստացված 63,2% նույնատիպ պատասխաններին: Նշենք, որ միջազգային համեմատական հետազոտություններում արդյունքների նման համնկնումը շատ հազվադեպ է պատահում: Դա կրկին վկայում է մեր համատեղ ուսումնասիրություններում ստացված արդյունքների բարձր վստահելիության մասին:

Ռուսաստանում ստացված արդյունքների համաձայն հայ միգրանտների 7,4% մտադիր է մոտ ապագայում վերադառնալ հայրենիք: Հայաստանում հարցված ընտանիքների 10% հայտնել է, որ իրենց բարեկամները մտադիր են շուտով վերադառնալ տուն: Ամփոփելով, կարելի է ասել, որ Ռուսաստանում հայ միգրանտների հայրենադարձության ռեսուրսը ներկայումս կազմում է մոտ 7-10%: Եթե հաշվի առնենք, որ մասնագետների կարծիքով հայ միգրանտների թիվը Ռուսաստանում այսօր մոտ 1 միլիոնի է հասնում, ապա կարելի է հաշվարկել հայրենադարձության ռեսուրսը, որը կկազմի մոտ 80-100 հազար մարդ: Հարկ է ընգծել, որ մենք ուսումնասիրել ենք միայն հայ միգրանտների հայրենադարձության մտադրությունները: Մինչդեռ հայկական սփյուռքը Ռուսաստանում ըստ «Ռուսաստանի հայերի միության» կազմում է 2,5 միլիոն: Հետևաբար հայկական սփյուռքի ընդհանուր հայրենադարձության ռեսուրսը կարող է կազմել 160-200 հազար մարդ:

Առանձնակի ուշագրավ էր պարզաբանել այն պայմանները, որոնց առկայության դեպքում հայերի վերադարձն ավելի իրական կդառնա:

Աղյուսակ 1

Հայ միգրանտների Հայաստան վերադառնալու գլխավոր պայմանները

(*կարելի էր տալ մի քանի պատասխան*)

	Հարցվածների պատասխանները	**Տոկոս**
.	Երբ կլինի բարձր աշխատավարձով աշխատանք	33,3%
.	Երբ կլավանան սոցիալ-քաղաքական պայմանները	25,7%
.	Երբ խաղաղություն կհաստատվի	18,1%
.	Ընտանիքների միավորման համար	8,3%

Եվս 20,8% պատասխանել են, որ նրանք կվերադառնան հայրենիքի կարոտից: Հետաքրքիր է, որ փաստորեն գրեթե նույն պատասխանները ստացվել են Ռուսաստանում հայ միգրանտների հարցման արդյունքում:

Աղյուսակ 2

Ռուսաստանի հայ միգրանտների ՀՀ վերադառնալու գլխավոր պայմանները (*կարելի էր տալ մի քանի պատասխան*)

	Հարցվածների պատասխանները	**Տոկոս**
	Երբ ՀՀ-ում տնտեսական իրավիճակը կլավանա	39,9%
	Երբ կվերանա պատերազմի սպառնալիքը	32,8%
	Երբ քաղաքական կայունություն կլինի	31,5%
	Երբ միջին աշխատավարձը բազմակի կավելանա	27,3%
	Երբ երկրում կբացվեն նոր աշխատատեղեր	22,4%

Շատ մոտ պատասխաններ են ստացվել նաև հայ փորձագետնե-րի հարցման արդյունքում:

Աղյուսակ 3

Հայ միգրանտների վեդառնալու գլխավոր պայմաններն ըստ փորձագետների (*կարելի էր տալ մի քանի պատասխան*)

	Հարցվածների պատասխանները	**Տոկոս**
.	Խաղաղության ու կայունության հաստատում	33,3%
.	Լավ վարձատրվող աշխատանքի առկայություն	33,3%
.	Ներքաղաքական կայունության հաստատում	30,0%
.	Տնտեսական իրավիճակի բարելավում	26,6%
.	Սոցիալական իրավիճակի բարելավում	20,0%
.	Հավատ Հայաստանի ապագայի հանդեպ	13,3%

Այսպիսով, մեր միգրանտների հայրենիք վեդառնալու գլխավոր պայմաններն են. նոր պատերազմի սպառնալիքի բացակայությունը, բնակչության անվտանգության երաշխիքները, նոր աշխատատեղերի բացման անհրաժեշտությունը և սոցիալ-տնտեսական պայմանների ընդհանուր բարելավումը: Հայաստանում հարցված ընտանիքների ճնշող մեծամասնության (86,8%) կարծիքով, հենց այս գլխավոր նախապայմանների ապահովումը կարող է խթանել նրանց վերադարձը:

Նշենք, որ Հայաստանում XX դարում եղել են հայերի հայրենադարձության մի քանի ալիքներ: Դեռ 1920-1930 թթ.-ին խորհրդային կարգերը կազմակերպել էին հայերի հայրենադարձություն Իրաքից, Հունաստանից, Սիրիայից, Բուլղարիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից[11]: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 1945 թվականին՝ Խորհրդային Հայաստանի խնդրանքով կազմակերպվել էր արտերկրի հայերի նոր հայրենադարձություն: 1946-1948 թթ. Հայաստան տեղափոխվեցին ավելի քան 100 հազար հա-

[11] **Дятлов В., Мелконян Э.** Армянская диаспора:очерки социокультурной типологии. Ер.: Ин-т Кавказа. 2009. С. 162.

յեր[12]: Հայաստանն ունի հայրենադարձության կազմակերպման պատմական որոշակի փորձ:

Եզրակացություն

Այսօր մեր երկրում և տարածաշրջանում քաղաքական, սոցիալական ու տնտեսական պայմանները կտրուկ փոխվել են: Ռուսաստանում պատերազմական իրավիճակի ու սանկցիաների պատճառով տասնյակ հազարավոր ռուս գործարարներ տեղափոխվել են Հայաստան: Նրանց մեջ անշուշտ կան նաև ազգությամբ հայեր: Ռուսաստանի հայ գործարարները կարող են պահպանելով տնտեսական կապերը Ռուսաստանի հետ, լուրջ աջակցություն իրականացնել երկու երկրների տնտեսության համար: Հայ միգրանտների հայրենադարձությունը մեծապես կնպաստի նոր ներդրումների ներհոսքին, ինչպես նաև մասամբ կօգնի լուծել լուրջ ժողովրդագրական խնդիրները: Թե՛ տնտեսական, թե՛ ժողովրդագրական և թե՛ անվտանգության տեսանկյուններից ՌԴ-ի հետ մեր հարաբերությունների խորացումը նպաստավոր է լինելու Հայաստանի համար: Հակառակ դեպքում արտահոսքն երկրից ավելի է աճելու:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռուսաստանում հայկական սփյուռքի ներկայիս վիճակը վկայում է այն մասին, որ այնտեղ երկու հակադիր միտումներ կան: Մի կողմից՝ դա հայկական սփյուռքին պատմականորեն բնորոշ ցանկությունն է՝ հիմնովին ինտեգրվել Ռուսաստանի սոցիալ-տնտեսական իրականության մեջ: Մյուս կողմից՝ ձևավորվում են տրամադրություններ հայրենադարձության նկատմամբ, հաշվի առնելով գլոբալ գործընթացներն և Ուկրաինայի հակամարտության համատեքստը: Ռուսաստանում և Հայաստանում ակադեմիական համատեղ ծրագրի շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները հիմք են տալիս վերլուծելու հայրենադարձության ներկա իրավիճակը:

---

[12] Population Redistribution in the Soviet Union, 1939-1956. Michael K. Roof and Frederick A. Leedy. Geographical Review, Vol. 49. No. 2. (Apr.1959). PP. 208-221 American Geographical Society.

Բանալի բառեր. հայրենադարձություն, սփյուռք, ինտեգրում, սոցիոլոգիական հետազոտություն:

ПЕРСПЕКТИВЫ РЕПАТРИАЦИИ РОССИЙСКИХ АРМЯН

Погосян Геворк
Академик НАН РА,
доктор социологических наук, профессор,
научный руководитель Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Современное состояние армянской диаспоры в России свидетельствует о наличие в ней двух противоположных тенденций: с одной стороны – это исторически присущее армянской диаспоре энергичное стремление основательно интегрироваться в социально-экономическую реальность России; с другой – возрастающие настроения к репатриации на родину в контексте современных глобальных процессов и конфликта на Украине. Результаты социологических исследований, проведенных в рамках совместного академического проекта в России и Армении, дают основания для анализа современной ситуации репатриации.

Ключевые слова: репатриация, диаспора, интеграция, социологические исследования.

PROSPECTS FOR REPATRIATION OF ARMENIANS FROM RUSSIA

Poghosyan Gevorg
Full member of the NAS of Sociology, Professor,
Scientific Director of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The current state of the Armenian Diaspora in Russia testifies to the presence in it of two opposite tendencies: on the one hand, it is the energetic desire historically inherent in the Armenian Diaspora to thoroughly integration into the socio-economic reality of Russia; on the other hand, growing orientations for repatriation to the homeland in the context of current global processes and the conflict in Ukraine. The results of sociological researches, carried out within the framework of the joint academic project in Russia and Armenia, provide grounds for analysis the current situation on repatriation.

Key words: repatriation, diaspora, integration, sociological surveys.